ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտում և ուսումնադաստիարակչական աշխատանքների ճշգրիտ կազմակերպում»

Դաստիարակ՝ Լիդա Առաքելյան

Մանկապարտեզ՝ «Անուլիկ մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Առաջին գլուխ.....5

Երկրորդ գլուխ.....11

Եզրակացություն.....13

Գրականության ցանկ.....14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից աշխարհում կրթության զարգացմանը զուգընթաց կարևորվում է հավասարաչափ, մատչելի, հասանելի կրթության ապահովումը հասարակության յուրաքանչյուր անդամի համար: Սա օրենսդրորեն ամրագրվել է դեռևս 1990թ.-ին ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների կողմից:Տեսաբաններ Ջեսսի Ջեքսոնը և Լիզա Ֆրիդմենը առաջ են քաշել այն գաղափարը համաձայն որի կրթությունը պետք է հասանելի և նպատակաուղղված լինի յուրաքանչյուր անձի ֆիզիկական և մտավոր զարգացմանը՝ անկախ նրա հոգեբանական և մտավոր կամ ֆիզիկական որոշ սահմանափակումներ:[1]

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձը խոսքային, հաղորդակցման, լսողության, տեսողության մտավոր, հուզական, շարժունակության և վարքի խնդիրներով պայմանավորված ուսուցման հետ կապված դժվարություններ ունեցող անձն է, որի կրթություն ստանալու իրավունքը ապահովելու համար անհրաժեշտ է կրթության առանձնահատուկ պայմաններ: Աշխարհի զարգացած երկրներում այսօր այդ առանձնահատուկ պայմանները ապահովում են խելամիտ հարմարեցումների ստեղծման ճանապարհով: Այս համատեքստում ԿԱՊԿՈՒ երեխաների կրթությունը և դաստիարակությունը կազմակերպվում է՝ ապահովելով երեխայի համակողմանի հասարակական զարգացումը և ներառելով նրան հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Նշված թեմայով հետազոտական աշխատանք կատարելու նպատակն է ուսումնասիրել և բացահայտել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ տարվող աշխատանքների կազմակերպումը, դրա իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովման, նախադրյալների բացահայտումը նախադպրոցական ուսումնական հաստատություններում: Այս տարիքային խմբում կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների հետ արդյունավետ աշխատելու համար անհրաժեշտ է, որ ն/դ հաստատության մանկավարժական կազմը նախապես երեխայի ընտանիքի կողմից տեղեկացված լինի սանի հատուկ կարիքի մասին: Այլապես մանկավարժական կազմը պետք է հմտորեն կարողանա բացահայտել տվյալ երեխայի հատուկ կարիքը՝ հենվելով տարիքային պետական չափորոշչի վրա: Կարևորվում է նաև կրթության հավասար պայմանների ապահովումը՝ ելնելով երեխայի կրթական կարիքից և նրա անհատական զարգացումից:

Այս ամենով հանդերձ՝ կարևոր է, որ նախադպրոցական ուսումնական հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ արդյունավետ աշխատելու համար անհրաժեշտ է ունենալ նախնական

[1] Wikipedia, Theory of Inclusion

պատկերացում տվյալ երեխայի առանձնահատուկ կարիքների մասին, կարողանալ դրանք համապատասխանեցնել նրա տարիքային խմբին բնորոշ չափորոշչային ցուցանիշների:

Մրցակցային, հավասարության և համագործակցության պայմանների ստեղծման պարագայում հնարավորություն կստեղծվի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ներառել կրթադաստիարակչական գործընթացի մեջ՝ հաշվի առնելով նրա կարողությունները, հետաքրքրությունները և քաջալերելով նրա փոքրիկ ձեռքբերումները:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԿԱՊԿՈՒ երեխաների կրթական կարիքի բացահայտումը և դրանց ուղղությամբ տարվող աշխատանքները

Համընդհանուր ներառության անցման շրջանակում ներդրվում է երեխաների կրթության կարիքի գնահատման անհրաժեշտությունը: Դեռևս նախորդ դարաշրջանում գոյություն է ունեցել կրթության հասանելիության սահմանափակումներ: Սա կապված էր հատկապես այն բանի հետ, որ գերիշխում էր բժշկական մոդել հասկացությունը, ըստ որի՝ հատուկ կարիքի անձը դիտարկվում էր, որպես «հաշմանդամություն» ունեցող անձ: Այս մոդելի պարագայում կարծես երկրորդ պլան է մղվել անձի՝ կրթական հաստատություններում ներգրավված լինելու հնարավորությունը: Բժշկական մոդելին հաջորդում է սոցիալական մոդելը, որը, կարծես հակադրությունն էր առաջինի և գլխավորապես կարևորվում էր անձի ներգրավվածությունը ոչ միայն կրթական համակարգում, այլևս սոցիալ-հասարակական բոլոր բնագավառներում: Արդի աշխարհում այսօր գերնպատակ է հնարավորինս համապատասխան պայմանների ապահովումը հատուկ կարիք ունեցող անձնաց՝ հասարակությունում ներգրավելու ուղղությամբ քայլեր և միջոցներ ստեղծելով: Ցավոք, շուրջ մեկ միլիարդ երեխա ունի առողջական որևէ խնդիր՝ կապված ֆիզիկական, մտավոր զարգացման հետ: Ըստ վիճակագրական տվյալների՝ շուրջ 200 միլիոն երեխա մեծ դժվարություններ է ունենում ոչ միայն կրթական, այլև հասարակական մշակութային կյանքում ակտիվ մասնակցություն ունենալիս: Սա դեռ պաշտոնական վիճակագրությունն է հուշում՝ ստվերում թողնելով չբացահայտված հսկայական քանակ:

2014 թվականի դեկտեմբերի 1-ին «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի ընդունումով Հայաստանի Հանրապետությունն ամրագրեց համընդհանուր ներառական կրթության անցման քաղաքական կամքը: Օրենքի 4-րդ հոդվածի 2.1 մասի համաձայն «Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակվում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք»: Իսկ 2022թ. սեպտեմբերի 7-ի И 34-Ն որոշման համաձայն հիմք ընդունելով «Նախադպրոցական կրթության մասին » օրենքի 24-րդ հոդվածի առաջին մասի 23-րդ կետի պահանջը՝ հաստատվել է 0-6 տարեկան երեխաների կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը սահմանելու մասին ԿԳՄՍ նախարարի հրամանը:

Նույնիսկ զարգացած երկրներում, առավել ևս նոր զարգացող երկրներում լրջագույն խնդիր է համարվում երեխաների հատկապես հատուկ կարիք ունեցող երեխաների

զարգացմանը, նաև կրթությանը խոչընդոտող հանգամանքները: Այս մարտահրավերի լավագույն լուծումը ներառական կրթությունը ճիշտ կազմակերպելն ու այն իրականացնելն է: Ցավոք, ներառական կրթության մասին պատկերացումները դեռևս շատ անկայուն հարթության վրա է գտնվում հայկական հասարակության մեջ և ոչ միանշանակ է ընդունվում բոլորի կողմից: Հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներից շատերը կարիք ունեն բուժհաստատություններում կամ վերականգնողական կենտրոններում երկարատև զննության, բուժման և խնամքի: Սա հանգեցնում է կրթական գործընթացի ժամանակավոր դադարեցման կամ թերի իրականացման: Այնուամենայնիվ, ներաեական կրթությունը կրթական համակարգ է, որի նպատակն է հավասար կրթության և կրթական պայմանների ապահովում հասարակության մեջ հաշմանդամություն կամ հատուկ կարիքներ ունեցող մարդկանց ներգրավմանը: Իրականում կրթությունը ավելի արդյունավետ է և առավել մատչելի է դառնում հենց ներառական կրթության շրջանակներում: Զարգացած շատ երկրներում հասարակությունն այլևս ընդունում և խրախուսում է այն գաղափարը, որ ներառումը համատեղ ապրելու, աշխատելու և սովորելու կենսակերպ է: Յուրաքանչյուր երեխա կամ անձ պետք է ապահովված լինի համապատասխան պայմաններով, և իրեն զգա տվյալ հասարակության կարևորագույն անդամ:

Ներառականկրթությունը դա համընդհանուր այնպիսի ծրագիր է, որի նպատակն է կրթական համակարգում ստեղծել և ապահովել հավասար պայմաններ, հավասար վերաբերմունք բոլորի համար, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար՝ բացառելով խտրականությունը, ինչպես նաև խղճահարությունը:

Ներառականություն կոչվող լայնածավալ գործընթացի մեջ արդյունավետ գործելառճ պետք է ունենան բժշկական, մանկավարժահոգեբանական, կրթական, սոցիալ-տնտեսական, առողջապահական, հասարակական մի շարք ինստիտուտներ: Այս բոլորի համակցված աշխատանքի արդյունքում է միայն, որ հնարավոր կդառնա ապահովել նոր մետոցում ներառական կրթական համակարգին:

Ժամանակակից զարգացած երկրներից շատերն, ինչպիսիք են Սկանդինավյան երկրները, եվրոպական մի շարք երկրներ ունեն ներառական կրթության տարաբնույթ դրսևորումներ՝ հանրակրթական, մասնակով-կրթական մակարդակներում: Եվ այստեղ ԿԱՊԿՈՒ անձը կամ երեխան հնարավորություն ունի որոշակի ընտրության: Իսկ նոր զարգացող և ներառականության գաղափարին նոր մոտեցող կրթական համակրգերում դառևս պատկերացումները և գործելառճը այլ են:

Ցավոք, նույն պատկերը նաև ՀՀ-ում է, ուր դեռևս ամբողջությամբ բացահայտված չէ ԿԱՊԿՈՒ երեխաների իրական թիվը և նրանց կարիքների գնահատումը: ՀՀ տարածքում

առկա 1464 դպրոցներից միայն 291-ն պաշտոնապես համարվում ներառական կրթության ներառական կրթության իրականացնող: Այս դպրոցների մեծ մասը Երևանում են: Մինչդեռ 2016թ. ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ ՀՀ-ում ապրում է հաշմանդամություն ունեցող մինչև 18տ. 8016 երեխա: Ըստ ՀՀ նոր մշակած օրենքի՝ մինչև 2025թ. Հայաստանն անցնելու է համընդհանուր ներառական կրթական համակարգի:[2]

Այս պարագայում շատ երեխաներ բաց են թողնում ն/դ տարիքի այն կարևորագույն փուլը, որի ճիշտ սոցիալական զարգացմամբ է պայմանավորված երեխայի՝ որպես ապագա անձի զարգացումը և արժեհամակարգի դրսևորումը: Ժամանակակից աշխարհում քաղաքակիրթ հասարակություններում ստեղծվում են խելամիտ հարմարեցումներ այն մարդկանց համար, ովքեր ունեն հատուկ կարիքներ: Հայաստանը ևս կարծես շարժվում է այս սկզբունքներով, բայց միևնույն ժամանակ խնդիրը ունի խորքային լուծումների կարիք: Հիմք ընդունելով Ջորջ Էվանսի հետևյալ դրույթը՝ «Յուրաքանչյուր ոք կարող է սովորել, միայն թե ոչ միևնույն օրը, և ոչ միևնույն ճանապարհով», պետք է նշել, որ կրթություն ստանալու հնարավորությունը ոչ միայն պետական հոգացության խնդիր է, այլև՝ մարդկային գիտակցության և հոգու կարևորագույն պահանջմունք:[3]

Պետք է նշել, որ կրթություն ստանալու կարևորությունը գնահատելի պիտի դառնա հասարակության ամեն մի օղակում՝ նախ՝ ընտանիքում, ապա ն/դ հաստատությունում և իր շարունակությունը գտնի կրթական հաջորդ միջավայրերում: Հարկ է նշել, որ մեր երկրում դեռևս ամբողջովին հաղթահարված չէ ԿԱՊԿՈՒ երեխաների հավասար և մատչելի կրթություն ստանալու դժվարին խնդիրը: Սա մի կողմից պահպանողական և ոչ առաջադեմ հասարակական մտածելակերպից, մյուս կողմից՝ պետական կրթական համակարգի ոչ լիարժեք գործելաոճից: Այս ամենին զուգահեռ երեխայի համար կարևորագույն միջավայր է ն/դ հաստատությունը: Քանի որ ընտանիքից հետո երեխայի առաջին սոցիալական միջավայրը հանդիսանում է ՆՈՒՀ-ը, շատ կարևոր է, որ այստեղ ապահովվի հավասար պայմաններ բոլոր երեխաների ֆիզիկական և մտավոր զարգացման համար: Կարևորելով սա՝ պետք է հաշվի առնել, որ հաճախ սահմանափակվում են որոշ երեխաների ֆիզիկական, մտավոր, հոգեկան առողջության որոշ դրսևորումները, ինչն էլ դժվարություններ է ստեղծում նրանց կրթական կարողությունների հարցում: Ն/դ տարիքի երեխաների ներառական կրթությունն իրականացվում է այն սկզբունքով, որ այդ հասակի բոլոր երեխաները կարող են և պետք է հաճապեն մակապարտեզ:

Ընդունելի են երեխաների տարբերությունները, տարիքը, զարգացման առանձնահատկությունները, ընտանիքի սոցիալական կարգավիճակը և այլն:[4]

---

[2] Վիքիպեդիա, ampop.am, ԿԱՊԿՈՒ երեխաների հետ տարվող աշխատանքը:
[3] Հայկական կարիտաս «Ներառական կրթություն» ձեռնարկ, 2019, էջ 6:
[4] Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, 2013/փետրվար/ էջ 38-39

Դաստիարակի դերն այստեղ ծնողի հետ համագործակցությունն է՝ բացահայտելու, թե որքանով է երեխան կարողանում յուրացնել կրթական ծրագիրը, համապատասխանում են արդյոք նրա հմտություններն ու իմացական դրսևորումները հաստատված չափորոշիչներին:

Հարկ է նշել, որ այս ամենով հանդերձ՝ ԿԱՊԿՈՒ երեխաները կարող են իրենց կրթադաստիարակչական գործընթացն ապահովել ն/դ հաստատություններում՝ իրենց հասարակակիցների սոցիալական միջավայրում:[5]Ներառական կրթության տեսաբան Ջեսսի Ջեքսոնն այս առումով արտահայտել է հետևյալ տեսակետը.

«Բոլորը հաղթում են, երբ բոլորը ներառված են»:[6] Մեկ այլ տեսաբան Մաջիք Ջոնսոնն եկել է այն համոզման, որ այն ամենն, ինչի կարիքն ունեն երեխաները փոքր-ինչ օգնությունն է, փոքր-ինչ հույսը և մեկը, ով հավատում է իրենց:[7]

Հայաստանում ներառական կրթությունը հանդիսանում է կրթական համակարգի դեռևս երիտասարդ ճյուղ, ունի դժվար հաղթահարելի մի շարք խնդիրներ, ինչպիսիք են ֆիզիկական միջավայրի համապատասխանեցումը տվյալ երեխայի կարիքներին, նրա կարիքի ճիշտ գնահատումը և համարժեք աջակցության տրամադրումը համապատասխան մասնագիտական խմբի կողմից: Ն/դ տարիքը երեխայի զարգացման այն շրջանն է, երվ ձեռք են բերվում ոչ միայն հմտություններ և իմացական գիտելիքներ, այլև զարգացնում է որոշակի մակարդակ, որը հետագայում հիմք է հանդիսանում գործունեության տարբեր ձևերի յուրացման համար:

Ձևավորված անձնահին հատկանիշները հետագայում հիմք են հանդիսանում կյանքում սոցիալականացվելու և ինքնահաստատվելու համար:

Ցավոք, ն/դ տարիքի այս կարևոր շրջանում շատ երեխաներ ինչ-որ չափով դժվարանում են կրթական լրիվ մասնակցություն ապահովելը: ԿԱՊԿՈՒ երեխաների ներգրավվածությունը ն/դ հաստատությունում և դրա կազմակերպումը հիմնվում է հետևյալ դրույթների վրա՝

1) ԿԱՊԿՈՒ երեխաներն իրենց հասակակիցների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության հարցում
2) ԿԱՊԿՈՒ երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, հոգեբանական, առողջապահական և սոցիալական ծառայություններից:
3) Երեխաների համակողմանի զարգացման տեսանկյունից նպատակային է երեխաների կրթության կազմակերպումը առանց հասարակությունից առանձնացման:[8]

---

[5] Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, 2011/փետրվար/էջ 40:
[6] Wikipedia. Jessie Johnson, Theory of Inclusion.
[7] Վիքիպեդիա, Գաղափարներ ներառական կրթության մասին:
[8] Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, 2013, էջ 40:

Կարել է և երբեմն նաև անհրաժեշտ է, որ ներառական կրթություն իրականացնող ն/դ հաստատությունում կրթադաստիարակչական գործընթացի բովանդակությունը, ինչու չէ նաև ֆիզիկական միջավայրը ենթարկվի որոշակի փոփոխությունների՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով ԿԱՊԿՈՒ երեխաների համար: Ն/դ հաստատությունում կարևորվում է երեխաների ֆիզիկական, կրթական բարոյահոգեբանական զարգացումը. ԿԱՊԿՈՒ երեխաների համար կրթությունը պետք է լինի ճկուն, հարմարեցվեն երեխաների կարիքներին և պահանջներին:[9]

Սրա հետ մեկտեղ պետք է մեծ ուշադրություն դարձնել յոթժուրաքանչյուր երեխայի անհատական զարգացմանը, սովորելու նկատմամբ նրա հետաքրքրությունների դրսևորմանը: Երեխաների կարողունակությունները պետք բացահայտվեն մանկավարժական կազմի, դաստիարակի կողմից, պետք է բոլոր երեխաների համար ստեղծվեն հավասար մասնակցային պայմաններ: Այստեղ տեղին էնշել Քերոլային Բելդինի «Ներառական լուծումներ» գրքում արտահայտած կարծիքը, ըստ որի ՝ «Հավասարությունը դռները բաց թողնելն է յուրաքանչյուրի համար, ով ունի դռներին մոտենալու միջոցներ, անաչառությունը երաշխավորվում է, որ կա ճանապարհ դեպի այդ դուռը, նրանց համար, ովքեր դրա կարիքն ունեն»[10]

Սրա հիմքում սոցիալական տեսության առաջին դրսևորումներն են, որի հիմնարար արժեքը մարդասիրությունն է:

ՆՈՒՀ հաստատություն մուտք գործած երեխայի կարիքի ակնհայտ բացահայտումը հիմնականում կատարվում է ծնողի կամ ընտանիք անդամների կողմից, իսկ ոչ ակնհայտ կարիքի բացահայտումը պետք է կատարվի դաստիարակների, մանկավարժական կազմի մշտական դիտարկումների արդյունքում: Կարիքի բացահայտումը երբևէ չպետք է խոչնդոտ հանդիսանա երեխաների մասնակցության համար: Այստեղ դաստիարակի գլխավոր խնդիրն է նախ բացահայտել երեխայի հետաքրքրությունները , նախասիրութոյւոնները, ուժեղ կողմերը և դրանք օգտագործի թույլ կողմերի զարգացման համար: Պետք է հմտորեն կարողանալ օգտագործել երեխայի նախասիրությունները (օրինակ՝ նկարելը, կառուցողական աշխատանքի նկատմամբ հետաքրքրությունը) առօրյա պարապմունքներում մասնակցություն ապահովելու նպատակով: Մեծահասակը, տվյալ դեպքում դաստիարակ-մանկավարժը կապող օղակ է հանդիսանում երեխայի և վերջինիս կրթական իրավունքի հավասարության միջև, քանզի դաստիարակի գլխավոր նպատակն է ԿԱՊԿՈՒ երեխաների զարգացմանը համապատասխան նրա համար հնարավորություններ և միջավայր ստեղծել: Ինչպես նշված է Ամերիկայի գրող

[9] Սեյվ դը չիլդրեն, Երեխաների մասնակցության ձեռնարկ, 2012, էջ 49-51:
[10] Հայկական կարիտաս «Ապրել կողք կողքի» ձեռնարկ ներառական կրթության աջակցման համար, 2022թ.:

Ռ.Պալացիոյի հայտնի «Հրաշքը» վեպում՝ «Աշխարհում ամեն մարդ պետք է կյանքում գետ մեկ անգամ հոտնկայս ծափահարությունների արժանանա, քանզի մենք բոլորս հաղթահարում ենք այս աշխարհը»:[11]

Սա պետք է կարգախոս դառնա մանուկների հետ աշխատող յուրաքանչյուր մեծահասակի համար:

[11] Ռ.Պալացիո «Հրաշքը» , 2012թ.

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Խոսքի զարգացման պարապմունքի պլանավորում

(Գեղարվեստական գրականություն)

Տարիքային խումբ՝ 4-5տ. /միջին խումբ/

Թեման՝ Ինչպես ձեռք բերել ընկերներ՝ հիմնված «Սկյուռը և փորսուղը» հեքիաթի վրա:

Մեթոդը՝ զույգերով կամ փոքր խմբերով

Նպատակը՝

- կսովորեն համագործակցել և օգնություն ցուցաբերել դժվարություն ունեցողներին:

կստեղծվի համապատասխան միջավայր ԿԱՊԿՈՒ երեխաների մասնակցությունն ապահովելու համար

- կզարգացնեն կապակցված խոսքը, կսովորեն երկխոսություն վարել միմյանց հետ

Միջավայր-փորսուղի, սկյուռիկի մեծադիր և փոքրադիր նկարներ, լճակի անտառի տեսարան, զամբյուղով սունկի մուլյաժներ, փոքրի սեղան՝ թեյի սպասքով, հույզերի նկարներ:

Ընթացքը-հեքիաթի ընթերցանության անկյունում ձևավորել համապատասխան միջավայր, անտառի, լճակի տեսարաններով, փակցնել նաև «տխուր» և «ուրախ» հույզերի մեծադիր նկարներ: Երեխաները նստած են կիսաշրջանաձև:

Խթանման փուլ-դաստիարակը ցույց է տալիս «տխրություն» և «ուրախություն» արտահայտող նկարները և հարցնում.

-Երեխաներ, դուք ի՞նչ եք զգում, երբ նոր ընկերներ եք ձեռք բերում: /Լսվում են 4-5 պատասխաններ/:

-Իսկ ի՞նչ կարելի է անել նոր ընկերներ ունենալու համար: /Լսվում են պատասխաններ/

«Տխուր» սմայլիկի հետևում տաքնված է փորսուղը: Դաստիարակը հարցնում է.

-Ի՞նչ եք կարծում ինչու է փորսուղը մի փոքր տխրել:

Իմաստի ընկալման փուլ-դաստիարակն ընթերցում և նկարների ու խաղալիքների միջոցով բեմադրում է հեքիաթը: Ընթերցվում է դադարներով, առաջադրվում են հետևյալ հարցերը՝

-Ինչի՞ց էր վախենում փորսուղը:

-Ի՞նչն էր խանգարում փորսուղին ընկերանալ որևէ մեկի հետ:

-Ի՞նչը օգնեց փորսուղին ընկերանալ սկյուռի հետ:

Ֆիզկուլտ դադար

Կշռադատման փուլ-զույգերով աշխատանք, բաժանվում են «տխրություն» և «ուրախություն» պատկերող նկարներ, առաջարկվում է հետևյալ երկխոսությունը՝

-Ինչպե՞ս կվարվեիր դու, եթե փորսուղի տեղը լինեիր, երբ քո մոտով լողար զամբյուղը:

-Դու ի՞նչ ես զգում, երբ օգտակար ես լինում քո ընկերոջը:

-Դու երբևէ տպրել ես այդ նույն պատճառով:

Պատասխանները լսելուց հետո «տխուր» սմայլիկի փոխարեն հայտնվում է «ուրախ» սմայլիկով փորսուղը, քանի որ կարողացել է օգտակար լինել ընկերոջը՝ այդպիսով ուրախություն նվիրելով նրան:

Պարապմունքն անցկացվել է Գյումրի քաղաքի «Անուլիկ մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի միջին խմբում: Խմբի կազմում եղել են 23 երեխաներ, որոնցից մեկն ուներտեսողության մասնակի խանգարում, իսկ մյուսը՝ մտավոր զարգացման հապաղում: Պարապմունքի ընթացում տեսողության խնդիրներ ունեցող երեխան նստած էր դաստիարակին ավելի մոտ՝ մեծադիր նկարների դիմաց, իսկ մտավոր զարգացման հապաղում ունեցող երեխան պարապմունքին ներգրավվել է իր նախասիրության և հետաքրքրասիրության շնորհիվ: Նա մասնակից է եղել՝ նկարելով սունկ սկուռիկի համար: Պարապմունքի ավարտին նկարված սունկը տեղադրվել է «հեքիաթի անկյունում» որպես խրախուսանքի միջոց:

Պարապմունքին ներկա են եղել նույն հաստատության տնօրեն Մ. Ղարաքեշիշյանը, մեթոդիստ Ն.Դանիելյանը, դաստիարակ՝ Հ. Ոսկանյանը: Պարապմունքը դիտարկողներին հետաքրքրեց թեմային համապատասխան հեքիաթի ընտրությունը, որի խրատական բովանդակությունն ուղղված էր ոչ միայն դժվարացողներին օգնելու, այլև սեփական ուժերին հավատալու և դրանով օգտակար լինելու գաղափարին: Երեխաների համար ապահովված էր մասնակցության համապատասխան պայմաններ, դրան նպաստեց երկխոսության վարումը, իսկ բաց հարցերի առաջադրումը խթան հանդիսացավ կապակցված խոսքի զարգացմանը: Մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխայի ուժեղ կողմը՝ կերպարվեստի հանդեպ ունեցած հետաքրքրությունը օգտագործվեց ապահովելու համար նրա մասնակցությունը պարապմունքին: Իսկ տեսողության խնդիր ունեցող երեխայի համար ստեղծված էր համապատասխան պայմաններ՝ մեծադիր նկարների ցուցադրություն, որոնցով կարողացավ նաև վերապատմել հեքիաթի բովանդակությունը: Կազմի կարծիքով՝ պարապմունքն ուղղված էր փոխօգնության և ընկերասիրության գաղափարին: Երեխաները կարողացան առաջարկել դժվարության հաղթահարման մի քանի եղանակներ: Մեթոդիստ Ն. Դանիելյանի առաջարկով ոռոավոտյան հանդիպումների մեկ շաբաթ նվիրել նմանատիպ ենթատեքստ ունեցող հեքիաթների և պատմվածքների ընթերցմանը:

Ըստ տնօրեն Մ. Ղարաքեշիշյանի ժամանակակից կրթական բարեփոխումից և պահանջներից ելնելով՝ կարևոր է նման թեմաների մասին պատկերացումների ձևավորումը սկսել հենց նախադպրոցական տարիքից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ժամանակակից կրթական համակարգը, անցնելով տարատեսակ փոփոխությունների և բարեփոխումների միջով, հասել է այն անհրաժեշտ գաղափարի գիտակցմանը, որ յուրաքանչյուր երեխա պետք է ունենա համապատասխան պայմաններ կրթություն ստանալու համար:

Հետազոտական աշխատանքի ընթացքում ուսումնասիրված տեսությունները և պրակտիկ գործունեությունը բերել է այն եզրահանգմանը, որ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքներումառավել պետք է կարևորվի երեխայի՝ սեփական կարողությունների, նախասիրությունների, ձեռքբերումների գնահատումը: Նրանց ուժեղ կողմերը պետք է հիմք հանդիսանան թույլ կողմերի որոշ կարողությունների և հմտությունների բացահայտման և զարգացման համար: Ելնելով երեխայի անհատական կարիքից՝ հարկավոր է ընտրել տարբեր մեթոդներ, դիդակտիկ պարագաներ: Ընդգրկելով համատեղ գործունեության տարբեր ձևերի մեջ՝ երեխաները կարողանում են բացահայտել իրենց կարողունակությունները և հմտությունները:
Ինչպես նշում է տեսաբան Ջ. Ջեքսոնը «Երբ բոլորը ներառված են, բոլորը հաղթում են»:

Այս թեմայի ուսումնասիրությամբ կարևոր է և արդիական ն/դ հաստատության աշխատողների համար, քանզի ՆՈՒՀ-ի հիմնական նպատակը պետք է դառնա ինչպես բոլոր երեխաների, այնպես էլ ԿԱՊԿՈՒ երեխաների համար կրթական հավասար պայմանների ապահովումը, կրթական ծրագրի իրականացումը՝ ելնելով երեխայի զարգացման առանձնահատկությունից:

Հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում հիմնավորվեց նաև նախնական պատկերացումներն այն մասին, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթական գործընթացի հաջողությունը կախված է նաև ինքնուրույնության և գործելու համար անհրաժեշտ պայմանների ապահովմամբ: Տարբեր կարիքներ ունեցող երեխաների հետ հարկավոր է ընտրել տարբեր մոտեցումներ և մեթոդներ, ուսուցման և դաստիարակության տարբեր միջոցներ, ուսուցողական և դիդակտիկ բազմաթիվ պարագաներ և խաղեր, ինչպես նաև համագործակցության արդյունքում առաջնորդվել ՏՄԱԿ-ի կողմից առաջարկված ԱՈՒԶՊ-ի /անհատական ուսուցման և զարգացման պլանով/:

Հարկ է նշել նաև, որ նախադպրոցական ուսումնական հաստատությունները լրջագույնս կարիք ունեն մանկավարժահոգեբանական կազմի, նեղ մասնագիտական թիմի աջակցության: Այսպիսով, ներառական կրթություն իրականացնող ն/դ հաստատությունների հիմնական նպատակը հատուկ կարիքներով երեխաների համար համատեղ գործունեության և կրթադաստիարակչական գործընթացի համար անհրաժեշտ պայմանների ապահովումն է՝ ելնելով երեխայի հատուկ կարքից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, 2011
2. Նախաշավիղ, 2013
3. Հայկական կարիտաս, Ներառական կրթություն, 2019
4. Հայկական կարիտաս, «Ապրելով կողք կողքի» ձեռնարկ ներառական կրթության աջակցության համար, 2022
5. Սեյվ դը չիլդրեն «Երեխաների մասնակցության ձեռնարկ», 2012, 2014
6. Սեյվ դը չիլդրեն «Ինչպես հաղորդակցվել հաշմանդամություն ունեցող անձանց հետ», 2017
7. Վորլդ Վիժն «ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանք», 2018
8. Ռ.Պալացիո «Հրաշքը», 2012
9. Վիքիպեդիա, գաղափարներ ներառականության մասին
10. Վիքիպեդիա, Տեսություններ ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության մասին
11. Վիքիպեդիա, ampop.am ԿԱՊԿՈՒ երեխաների հետ տարվող աշխատանքը
12. Մանկական ստեղծագործությունների ընտրանի
13. Wikipedia, Liza Fridmen, Theory of Inclusion
14. Wikipedia, Jessine Jackson, Theory of Inclusion